ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար թղթի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-Թ-18/1» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի փետրվարի 15-ին կնքված N «ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-Թ-18/1.1» պայմանագրում 2018 թվականի հունիսի 29-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվել է 2-րդ եռամսյակում նախատեսվող մատակարարվող ապրանքի մատակարարման ժամկետը ավելացնել 30 օրացուցային օրով՝ կապված ներմուծման ընթացքում առաջացած խնդիրների հետ:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրի Հավելված N1 հանդիսացող տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով 2-րդ եռամսյակում նախատեսվող մատակարարվող ապրանքի մատակարարման ժամկետը ավելացնել 30 օրացուցային օրով:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրի 8.5 և 8.6 կետերը:

Պատվիրատու՝ ***ՀՀ քննչական կոմիտե***

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

15.02.2018թ. կնքված N ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-Թ-18/1.1 պայմանագրի

Ք. Երևան <<29>> հունիսի 2018թ.

ՀՀ քննչական կոմիտեն, ի դեմս դեպարտամենտի ղեկավար Ա. Զալինյանի, որը գործում է դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Տ. Ղարիբյանի, (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև կողմեր, հիմք ընդունելով կողմերի միջև 15.02.2018թ. կնքված N ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-Թ-18/1.1 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.6 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին Պայմանագրի Հավելված N1 հանդիսացող տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով 2-րդ եռամսյակում նախատեսվող մատակարարվող ապրանքի մատակարարման ժամկետը ավելացնել 30 օրացուցային օրով՝ մինչև 30.07.2018թ.:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ քննչական կոմիտե	«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5	ք. Երևան, Վարդանանց 110
ՀՀ ՖՆ աշխատակազմի	«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ
գործառնական վարչություն,	Հ/Հ 163007031509
Հ/Հ 900011000834	ՀՎՀՀ 01548908
ՀՎՀՀ 02631263	էլ. հասցեն՝ ssmartline@mail.ru
	Հեռ. (010) 558483
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ